ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
Ширакский центр арменоведческих исследований НАН РА
Shirak Centre of Armenological Studies NAS RA

ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ НАУЧНЫЕ ТРУДЫ SCIENTIFIC WORKS

ՀԱՏՈՐ ВЫПУСК EDITION 28 2025 № 1

Ա Զ Գ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
E T H N O G R A P H Y

ՀՏԴ՝ 908
DOI: 10.52971/18294316-2025.28.1-115

ՏԱՐԱԾՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳԱՆՁԱԿԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Ռաֆիկ Գ. Գաբրիելյան
ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, ՀՀ

Ամփոփում
Նախաբան. Գանձակը Հայաստանի պատմազգագրական շրջաններից է, որը գտնվում է պատմական Արցախ նահանգի հյուսիսային և Ուտիք նահանգի հյուսիսարևմտյան մասում՝ հանդիսանալով հայկական մշակութային տարածքի սահմանը հյուսիս-արևելքից: *Մեթոդներ և նյութեր.* Հոդվածի համար աղբյուրներ են ծառայում ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվում պահվող ազգագրական նյութերը, ինչպես նաև տպագիր աշխատություններ: Հետազոտության ընթացքում համադրվել, համեմատվել և վերլուծվել են արխիվային ու տպագիր աղբյուրներում առկա տվյալները: Հետազոտությունն իրականացնելիս կիրառվել են նաև ժամանակակից մեթոդներ, մասնավորապես՝ աշխարհագրական տեղեկատվական համակարգը (ԱՏՀ): *Վերլուծություն.* Գանձակի գավառում, ըստ գործառույթի, առանձնանում էին տարածքի օգտագործման երեք հիմնական գոտիներ: Առաջինը սահմանափակվում էր բնակավայրի և դրա շուրջը գտնվող տնտեսական կառույցների տարածքով: Երկրորդը ավելի ընդգրկուն էր, և ներառում էր հիմնական երկրագործական տարածքը: Երրորդը արոտավայրերի գոտին էր: Այս հիմնական տարածքային միավորներից բացի կարելի է ավելացնել ևս մի՝ չորրորդ գոտի, որի անհրաժեշտությունը առաջանում էր աղետների և թշնամական հարձակումների դեպքում: Դա այն տարածքն էր, որտեղ հնարավոր էր ժամանակավորապես բնակություն հաստատել՝ պաշտպանվելու և պատսպարվելու նպատակով: *Արդյունքներ.* Գանձակում լանջերի օգտագործումը լանդշաֆտի իրացման գլխավոր առանձնահատկությունն էր, որը ենթադրում էր կիրառել բնակավայրերի, վարելահողերի, այգիների ու ոռոգման համակարգերի ստեղծման ընթացքում դրսևորվող դարավանդման տարբեր եղանակներ: Այս մշակութային իրողությունը, խիստ բնութագրական լինելով Գանձակի

հայերի համար, ընկալվում էր որպես էթնոտարբերակիչ հատկանիշ: Լանջերի օգտագործման հիմնական պատճառը թուրքական էթնիկ խմբերի հետ ունեցած հակասություններն էին: Լքելով հարթավայրերը՝ հայերը, քիչ-քիչ, սկսեցին զբաղեցնել ավելի անմատչելի տարածքներ, որտեղ հիմնեցին դարավանդային բնակավայրեր և զարգացրին դարավանդային երկրագործությունը:

Բանալի բառեր՝ *Գանձակ, բնակավայր, տուն, երկրագործություն, դարավանդ, ազգագրություն, տեղագրություն:*

Ինչպես հղել՝ Գաբրիելյան Ռ. *Տարածքի օգտագործման առանձնահատկությունները Գանձակի շրջանում* // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», Հ. 1 (28): Գյումրի: 2025: 115-127 էջեր: DOI: 10.52971/18294316-2025.28.1-115

SPECIFICITY OF SPACE USE IN GANDZAK DISTRICT

Rafik G. Gabrielyan

Institute of Archaeology and Ethnography of NAS, Yerevan, RA

Abstract

Introduction; Gandzak is one of the historical-ethnographic regions of Armenia, which occupies the northern part of the province of Artsakh and the northwestern part of the province of Utik, constituting the northeastern border of the Armenian cultural territory. *Methods and materials:* The sources of the article were ethnographic materials from the archive of the Institute of Archaeology and Ethnography NAS RA, as well as the printing publications. During the study, data from archival and printed sources were synthesized, compared and analyzed. The study also used modern methods, in particular, the geographic information system (GIS). *Analysis:* Armenian villages of Gandzak were located mainly in the middle foothills of the region, in areas from 800 to 1700 m above sea level. They are mainly located in gorges or on the slopes of the mountains. In Gandzak, three main zones of space use were distinguished according to their functional purpose. The first zone was limited to the territory of the settlement and the farm buildings around it. The second, more extensive zone included the agricultural landscape. The third included the livestock area. To these main territorial units, one can add another, a fourth zone, the need for which arose only during enemy attacks. This is a mountain zone where one could take cover. *Results:* The use of slope areas is a key feature of landscape development in the study area, which is manifested in the creation of settlements, arable lands, gardens and even irrigation systems. In all cases, the development of slopes was carried out through various terracing methods, which, being very characteristic of the Armenians of the Gandzak region, in some cases was perceived as an ethnic-differentiating feature. The main reason for using the slopes was conflicts with the Turkish ethnic groups. Having left the plains, the Armenians eventually began to develop more inaccessible areas, where they founded terraced settlements and practiced terraced agriculture.

Key words: *Gandzak, settlement, house, agriculture, terrace, ethnography, topography.*

Citation: Gabrielyan R. *Specificity of Space Use in Gandzak District* // "Scientific Works" SHCAS of NAS RA. V. 1 (28). Gyumri. 2025, 115-127pp.. DOI: 10.52971/18294316-2025.28.1-115

ՆԱԽԱԲԱՆ. Ազգագրական նյութի ակտիվ գրառման ընթացքում (19-դարի կես - 20-րդ դարի սկիզբ) Գանձակը համարվել է ուրույն մշակույթ ունեցող շրջան, և շատ հետազոտողների աշխատանքների շնորհիվ այսօր առկա են բավարար չափով տվյալներ անցյալում շրջանի մշակութային դիմագծերը ներկայացնելու համար[1]: Հայկական մշակույթի ընդհանուր տարածվածության տեսանկյունից՝ Գանձակը ունի ծայրամասային դիրք: Այս հանգամանքից ելնելով՝ ժամանակի ընթացքում կրել է տարբեր ազդեցություններ:

Տարածքի օգտագործումը մարդու տնական գործունեության արդյունքում բնական միջավայրը ձևափոխելու գործընթաց է, որի շնորհիվ ձևավորվում է մշակութային լանդշաֆտը [9, էջ 538]: Այդպիսով բնական միջավայրը ձեռք է բերում նոր տեսք, որը բացի նյութական մշակութային արժեքների համախումբ լինելուց, ներառում է վարքագծի և կոլեկտիվ հիշողության դրսևորումները[2], որ ենթադրում են որոշակի ինքնության արտացոլում [8, էջ 74]:

Ուսումնասիրության շրջանակում փորձ է արվել ներկայացնել տարածքի օգտագործման ժողովրդական եղանակները՝ ցույց տալով դրանց առանձնահատկությունները և զարգացման պատճառները:

Ցանկացած մշակութային լանդշաֆտի ձևավորման համար առանցքային է ուսումնասիրել բնական միջավայրի ֆիզիկա-աշխարհագրական հատկանիշները: Այս առումով ուսումնասիրվող տարածքում փաստացի հետազոտություններ անելու անհնարինությունը լրացվել է ԱՏՀ ծրագրի միջոցով ստացված տվյալներով: Այն հնարավորություն է տալիս մշակութային միավորները դիտարկել որոշակի մշակութային միավորների տարածման օրինաչափությունների, լանջերի դիրքի, ջրային պաշարների առկայության և այլնի մասին:

Հոդվածն արդիական է, քանի որ, ազգագրության բնագավառում, հայկական մշակույթի օրինակով, առաջին անգամ փորձ է արվում կիրառել ԱՏՀ գործիքակազմը: Այս առումով աշխատանքի նորույթը, Գանձակի շրջանում հայկական բնակավայրերի տեղագրության օրինաչափությունների և դրա պատճառների բացահայտումն է:

Գանձակի գավառի հայկական բնակավայրերի տեղագրությունը. տարածքի ընտրություն սկզբունքները

[1] Հոդվածը գրվել է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում իրականացվող՝ «Հայոց դարավանդային երկրագործությունը» գիտական թեմայի շրջանակում՝ բազային ֆինանսավորմամբ: Օգտակար խորհուրդների, առաջարկների և աջակցության համար շնորհակալություն ենք հայտնում ազգագրագետներ Սուրեն Հոբոսյանին և Հասմիկ Աբրահամյանին:

[2] Օրինակ՝ կրոնական վարքագծի տարածված դրսևորում էր սրբատեղիների մոտ գտնվող ծառերից հագուստի կտորներ կապելը, որը համարվում է տարածքի մշակութայնացման դրսևորում: Ըստ էության՝ այն «փափուկ» ազդեցության է, որը լանդշաֆտը ֆիզիկապես չի ձևափոխում: Հայաստանի բոլոր գյուղերում ընդունված էր գյուղի շրջակայքում գտնվող հանդամասերին և տեղավայրերին անուններ տալը, որը ժամանակի ընթացքում փոխանցվում է հաջորդ սերունդներին: Տեղավայրերի անվանադրությունը չի կարելի համարել ուղղակի ազդեցություն լանդշաֆտի վրա, սակայն դա տարածքի մտովի յուրացման դրսևորում է, որը անհրաժեշտ է կողմնորոշման համար ու այս առումով համարվում է կոլեկտիվ հիշողության բաղադրատարր: Քննարկված օրինակների համատեքստում, նշենք, որ ստեղծվում էր տարածքի հանդեպ էմոցիոնալ կապվածություն, որն էլ իր հերթին ինքնության մի բաղադրիչ է:

Գանձակի շրջանի հարավարևմտյան հատվածը լեռնային է՝ կտրտված գերազանցապես հարավ-արևմուտքից հյուսիս-արևելք ուղղված ձորերով, իսկ հյուսիսարևելյան մասը հարթավայրային է [10, էջ 2: 4, էջ 261]:

Ըստ 19-րդ դարի և 20-րդ դարասկզբի տվյալների՝ շրջանի ցածրադիր հարթավայրային տարածքները զբաղեցրել են թյուրքական էթնիկ տարրերը[3]: Հայերը հիմնականում ապրել են շրջանի բարձրադիր հատվածներում՝ գյուղեր հիմնելով ձորերում ու սարալանջերին, ընտրելով տնտեսական գործունեության համար ոչ պիտանի ամենաանհարմար ու քարքարոտ հատվածները [11, էջ 96: 12, էջ 5: 6, էջ 3]: Նախապատվությունը տալիս էին արեգունի լանջերին [10, էջ 12[4]]:

Ըստ ԱՏՀ-ի տվյալների՝ հայկական գյուղերը տարածվում էին հյուսիս-արևմուտքից դեպի հարավ-արևելք ձգվող երկայնական գոտիով՝ զբաղեցնելով Սևանի ու Մռավի լեռնաշղթաների հյուսիսարևելյան լեռնաթեների ստորին ու միջին հատվածները: Դրանք հիմնականում գտնվել են ծովի մակարդակից 800-1700 մ բարձրություններում: Ամենաբարձր գոտում գտնվում էին Շահումյան և Քարհատ գյուղերը (Քարտեզ 1[5]): Սարով, Ղարադաղլու և Խոյլար հայկական գյուղերը դուրս են այս գոտուց, դրանք 200-500 մ նիշերում են: Հայեր ապրել են նաև Զակամ կայարանի հարակից նույնանուն բնակավայրում, ինչպես նաև Գանձակ քաղաքում[6]:

Ըստ հայոց մեջ ընդհանուր տարածում ունեցող սկզբունքների՝ բնակելի տարածքի ընտրության համար կային տարբեր պատճառներ, որոնցից գերակա նշանակություն ուներ անվտանգության գործոնը: Այս առումով բացառություն չէր նաև Գանձակը: Նախալեռնային գոտին այս տեսանկյունից ամենահարմարն էր, քանի որ վտանգի դեպքում, հնարավոր էր մոտակա լեռներում ու ձորերում պաշտպանվել ու պատսպարվել: Վաչկատուն ցեղերի ասպատակությունների ժամանակ Շամքորի ձորը (հատկապես Գառնակեր (Բարում) գյուղի մոտ գտնվող հատվածը) բազմիցս ապաստարան է հանդիսացել շրջակա հայկական գյուղերի բնակչության համար [4,էջ 308]: 1826-28թթ. ռուս-պարսկական պատերազմի ժամանակ ևս, ամրացել են հենց այս ձորում [6, էջ 3]: Հիշատակություն կա այն մասին, որ այդ ժամանակ Չարդախլու գյուղի բնակչությունը երեք տարի պատսպարվել է այնտեղ՝ Գառնակերին մոտակա մի անմատչելի վայրում [3, էջ 3]: Այդպիսի երկարատև հանգրվանի համար անհրաժեշտ էր որոշակի հարմարություններ ստեղծել:

---

[3] 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբներին հրատարակված աշխատություններում Հարավային Կովկասում ապրող թուրքալեզու էթնիկ խմբերը անվանվել են տարբեր կերպ: Ավելի տարածված էին «թաթարներ», «կովկասի թաթարներ», «կովկասյան թուրքեր» ընդհանուր տարբերակները: Համատեքստից կախված՝ հեղինակները նշել են նաև առանձին ցեղանուններ: Սույն հոդվածում կօգտագործվեն ընդհանրական համարվող «թյուրքական էթնիկ տարրեր» կամ «թյուրքական էթնիկ խմբեր» հասկացությունները:

[4] Այս տեղեկությունը հաստատվում է նաև ԱՏՀ-ի տվյալներով: Գյուղերի մեծ մասը տեղաբաշխված են հարավ-արևելք նայող լանջերին, որոնք ձորերի դիրքադրության պայմաններում համարվում են ամենաարևկող ուղղության վրա գտնվողներ:

[5] Քարտեզը կազմվել է Ն. Ղազարյանի արխիվային քարտեզի [2, ց. 1] հիման վրա՝ QGIS ծրագրով: Գյուղերի հստակ տեղորոշման նպատակով օգտագործվել են ԽՍՀՄ ԳՇ 100.000 մասշտաբանոց հետևյալ քարտեզները՝ K-38-116, K-38-117, K-38-118, K-38-128, K-38-129, K-38-130, ինչպես նաև Open Street Map և Google Satellite Hybrid համակարգերը:

[6] Ուշագրավ է, որ նույնիսկ Գանձակ քաղաքում հայկական թաղամասերը զբաղեցրել են բարձրադիր՝ ապրելու համար ավելի անհարմար տարածքները [4, էջ 285]:

Օրինակ՝ Շամքոր գետի աջափնյա բարձր ժայռերի մեջ նկատվել են փորված ապաստարաններ [1, էջ 2]: Դրանք, ամենայն հավանականությամբ, պետք է հենց օգտագործվեին երկարատև պատսպարման նպատակով ու նմանատիպ լինեին Գորիսի, Խնձորեսկի և առհասարակ Սյունիքում ու Արցախում տարածում ունեցող «քըրատակներին»:

Ուշագրավ է, որ լեռներն ու կիրճերը օգտագործվել են ոչ միայն պաշտպանվելու, այլև համաճարակներից խուսափելու համար: Նման մի դեպք է փաստագրվել 1892 թ., երբ Գառնակեր գյուղի երիտասարդ քահանայի հորդորով տեղացիները բարձրացել են շրջակայքի լեռները ու զերծ մնացել համաճարակից [6, էջ 3]:

Գյուղերի հիմնադրման վայրերը ընտրվել են այնպես, որ հնարավորություն լիներ մշակել գետահովիտներում գտնվող հողատարածքները: Ձորերին մոտ՝ գետամերձ լանջերին հայերը այգիներ էին մշակում, որոնք սովորաբար գտնվում էին գյուղերից ներքև, բոլոր այն լանջերին, որտեղ հնարավոր էր ոռոգման ջուր հասցնել, տարածվելով մինչև գետափնյա մասերը [10, էջ 10]: Գյուղի տեղի ընտրության համար ավանդաբար կարևոր էր նաև շրջակայքում վարելահողերի ու խոտհարքների առկայությունը [7, էջ 228]:

Գյուղերը ձորերի մեջ հիմնելն ուներ ևս մեկ կարևոր պատճառ: Ձորով հոսող գետերի մոտ հնարավոր էր ջրաղացներ կառուցել, որ կենսական նշանակություն ուներ երկրագործ հայ բնակչության համար: Հայկական բոլոր գյուղերը մոտակա ձորերում ջրաղացներ ունեին, իսկ Բադան ուներ 11-ը [7, էջ 227]: Հայկական ավանդական ջրաղացները աշխատում էին գետերից հանված առուների ջրով: Դրանք կառուցվում էին այնպիսի հատվածներում, որպեսզի հնարավոր լիներ առվի ջուրը ուղղորդել դեպի «նովը»: Դրա միջոցով հոսելով՝ ջուրն անկման ուժի հաշվին գործի էր դնում ջրաղացի «թոփը» (թիանիվ) (5, ց. 1, գ. 2, թ. 6):

Բնակելի տարածքի կազմակերպումը

Գանձակի գավառի հայկական գյուղերը մեծ մասամբ գտնվել են զառիվայր տարածքում և, պայմանավորված այս առանձնահատկությամբ, դրանք ունեցել են դարավանդային կառուցապատում: Ավանդաբար տները իրար մոտ էին սարքում: Շատ բնակավայրերում մի տան կտուրը մյուսի համար բակ էր ծառայում, ու նաև՝ փողոց: Առանձին տների հարակից տարածքը խիստ սահմանափակ էր [1, էջ 1: 4, էջ 308]:

Բնակչության աճով և տնտեսական գործունեության փոփոխություններով պայմանավորված՝ գյուղերի տարածքները աստիճանաբար ընդլայնվում էին: Օրինակ՝ Բադա գյուղը ի սկզբանե եղել է ձորի մեջ, սակայն ժամանակի ընթացքում քիչ-քիչ տեղափոխվում է «Լղարակ» կոչվող սարահարթը, որը, անշուշտ, բնակության համար ավելի հարմար էր [7, էջեր 228-229]:

Բնակարանային համալիր ասվածը ավանդաբար ներառում էր երեք տեսակի կառույց՝ տուն, գոմ և կալ, որին կից կար նաև մարագ [10, էջ 40]:

Հայկական գյուղերին բնորոշ էր նաև գյուղից ոչ մեծ հեռավորության վրա ունենալ «գոմահանդեր» [10, էջ 13]: Օրինակ՝ Բարսումի գոմահանդերը գտնվում էին գյուղից 2-5 կմ հեռու, «Բգումա ձոր», «Վանքի ձոր», «Վրզաձոր», «Թղկուտի ձոր», «Իրկիշեցիքի ձոր», «Մթոսաձոր», «Գոմերի ձոր» և այլ վայրերում, որտեղ նաև խոտ էին կուտակում [5, ց. 1, գ. 2, թ. 6]: Սովորաբար գոմահանդը բաղկացած էր տներից, գոմերից, մակաղատեղե-

րից և անասնապահությամբ զբաղվելու համար անհրաժեշտ այլ տնտեսական կառույցներից [7, էջեր 227, 233]։

Բարսում և Գառնակեր գյուղերի օրինակով բնակելի ու տնտեսական տարածության կազմակերպման մասին ուշագրավ տեղեկություն է հայտնում Ն. Ղազարյանը։ Այս գյուղերը տեղաբաշխված էին երկու առանձին վայրում՝ ձորում ու սարահարթում։ Գյուղերի ձորում գտնվող հատվածներին ասել են «շեն», իսկ սարահարթի վրա գտնվող գյուղատեղերին ասում էին «սար»։ Այսպիսով՝ կա Գառնակերի շեն, Բարսումի շեն՝ ձորում և Գառնակերի սար, Բարսումի սար՝ սարահարթում։ Ձորի շենում հիմնականում զբաղվել են այգեգործությամբ, իսկ սարում՝ դաշտավարությամբ։ Շենում մեծ մասամբ ապրել են ձմռանը, իսկ սարում՝ ամռանը։ Շենը գտնվելով հարավահայաց՝ արեգունի լանջերին, ձմռան ավելի տաք էր։ Միևնույն ժամանակ, այն պաշտպանված էր քամիներից։ Ձմռանը սարում մնում են միայն այն ընտանիքները, որոնք շենում գոմեր չունեին ու ընտանի կենդանիներին խնամելու նպատակով մնում էին այդտեղ [5, ց. 1, գ. 1, թ. 2]։

Տարածքի օգտագործման ու կազմակերպման այս ժողովրդական եղանակը կարելի է համարել տվյալ գյուղերի առանձնահատկությունը։ Ըստ էության, գյուղերը սկզբնապես գտնվել են ձորում, այս մասին է վկայում «շեն» անվանումը։ Ենթադրաբար սարահարթն ի սկզբանե ծառայել է որպես գոմահանդ։ Ժամանակի ընթացքում, սոցիալ-տնտեսական զարգացման արդյունքում գյուղերը մեծ մասամբ տեղափոխվել են սարահարթ։ Խորհրդային վերջին շրջանում արդեն, այս երկու գյուղերի բնակիչները գերազանցապես բնակության են հաստատել սարահարթում, իսկ շենները օգտագործվել են որպես ամառանոց։

Ձորերից սարահարթ տեղափոխվելու երևույթը հայտնի է Հայաստանի այլ շրջաններից ևս։ Նման օրինակ են Լոռվա Այգեհատ (Իգահատ), Սյունիքի Խոտ, Շինուհայրը, Հալիձոր, Հարժիս գյուղերը։ Պարզապես Բարսումի ու Գառնակերի դեպքում այդ տեղափոխությունը դանդաղ է ընթացել, ինչը և բնութագրվել է այնպես, որ այդ գյուղերը, երկու, իրարից կտրված բնակելի հատված են ունեցել։

Ձորում գտնվող շենները կառուցված էին խիստ զառիվայր ու քարքարոտ տեղանքում։ Առավել դժվարամատչելի էր Գառնակերի շենի դիրքը (նկ. 1)։ Ն. Ղազարյանն այս մասին գրում է հետևյալը. «Հինավուրց այս գյուղը իր դիրքով անառիկ ամրոցի է նման։ Հյուսիսից «ցից քարի» խոր, քարքարոտ ձորը, հարավից՝ «Բովի ձորի» երկինք քերող լեռները, Շամխոր գետի խոր կիրճը, արևմուտքից՝ «սանգարի» հսկա քերծերը, արևելքից՝ Շամխորի խոր ձորը գյուղը դարձրել են բնական ամրոց։ Գյուղի դիրքը թույլ է տվել նրա բնակիչներին իշխել «Զոռ պռակից» կամ Հնձանաձորի կողմից երևացող թշնամու վրա և նրան ճակատամարտ տալ «Զոռ պռակի» և «Գառերի ձորի» մատույցներում։ Գյուղի շատ տներ կառուցված են հսկա ավազաքարերի տակ, որոնք սպառնագին վտանգ են հանդիսանում իրենցից ներքև՝ սարալանջերին կառուցված տների համար։ Բնակիչներն այդ հսկա քարերից շատերն արհեստականորեն ամրացրել են և վնասազերծել։ Պատահական չէ, որ հարևան հայկական գյուղերի բնակիչները, հանդիպելով գառնակերցուն, բարևից հետո կատակով հարցնում են. «ախպեր, էն ժնջիլով կապած քարը բաց չի ընկե՞լ»» [5, ց. 1, գ. 2, թ. 1-2]։

Դաշտավարությամբ զբաղվող ու հացաբույսեր մշակող ցանկացած համայնքի համար ավանդաբար կարևոր տնտեսական համալիր էր կալը, որից ուներ ամեն ընտանիք: Հացահատիկը կալսել են կամի տախտակներով, որոնց լծում էին մի զույգ եզ կամ մի ձի [2, գ. 1, թ. 15]: Կալերը սարքում էին տների բակերում, քանի որ լանջերին գտնվելով՝ դրանք դարավանդաձև էին, կալերի համար նույնպես պետք էր ստեղծել դարավանդ՝ հարթեցնելով լանջի վրա ընտրված կալի տարածքը: Դրա ստորին մասում ամուր հենապատ էին կառուցում: Ուշագրավ է, որ տնտեսագետ Ի. Սերեբրյակովը, նկատելով հայկական գյուղերին բնորոշ այս իրողությունը, նշում է, որ հենապատերով ու հարթեցված տարածքով կալերը ավելի էին ընդգծում գյուղերի դարավանդային համայնապատկերը, որը Գանձակի շրջանի հայկական գյուղերի կենսամիջավայրի բնութագրական առանձնահատկությունն ու համարվում էր դրանց էթնոտարբերակիչ հատկանիշը [11, էջ 163]:

Տունը՝ բնակավայրի ներսում

Ավանդաբար տները կիսագետնափոր էին և միահարկ, որոնց կտուրները հարթ էին՝ վրաները հող լցրած: Դրանք կառուցված էին տեղական ավազաքարից, որն իր կարծրությամբ մոտ էր բազալտին: Ուշ շրջանում օգտագործվել է նաև շաղախը, որը պատրաստել են կրի ու ավազի և կավի ու հարդի խառնուրդով: Դրսի կողմից միայն «դարզ են արել[7]», իսկ ներսից սվաղել են: Շենքի կտուրը ծածկել են կաղնու գերաններով, որոնք շարել են իրարից մեկ մետր հեռավորությամբ: Դրանց վրա շարել են տարբեր հաստության ճյուղեր, իսկ ուշ շրջանում՝ տախտակներ, որոնց արանքները լցրել են փայտի տաշեղ: Ապա ծածկել են տասը սանտիմետր հաստությամբ մամուռի շերտով, որը պատել են կավի ու հարդի խառնուրդով պատրաստված շաղախով: Այնուհետև լցրել են հող [5, ց. 1, գ. 2, թ. 2-3]:

Տներն ավանդաբար բակում ունեին հորեր, որտեղ պահվում էր հացահատիկը: Կարևոր էր դրանք տնից դուրս սարքելը, որպեսզի ապահովվեր ջերմաստիճանի ու խոնավության կայունությունը: Մինչև հացահատիկը ամբարելը հորերը նախապես բոլոր կողմերից պատում էին ծղոտով, որ բերքը անմիջականորեն չշփվեր հողի հետ [11, էջ 63]:

Կիսագետնափոր տների հետին պատն ամբողջությամբ մխրճված էր հողի մեջ ու միևնույն ժամանակ հանդիսանում էր պատվար, որպեսզի լանջը չփլվի: Հաճախ այս պատի եզրով սարքում էին տան հիմնական հատակից մինչև մեկ մետր բարձրություն ունեցող մի հարթ տարածություն: Այդտեղ էր լինում թոնիրը: Հետին պատի մի կողմում՝ փոքր սենյակ էին փորում, որտեղ պահվում էր սննդամթերքը [5, ց. 1, գ. 2, թ. 4-6]:

19-րդ դարի վերջերից սկսած՝ Գանձակի գավառում սկսում են կառուցել պատշգամբով, պատուհաններով ու երկթեք տանիքով, մի քանի սենյակ ունեցող տներ, սակայն այս ոճի տների կառուցումը մեծ թափ է ստացել 1940-ական թ. վերջերից՝ Հայրենական մեծ պատերազմից հետո: Մի տան կտուրը այլևս բակ չէր ծառայում մյուսի համար, տների միջև թողնվում էր բավարար տարածություն: Չնայած այդ փոփոխություններին՝ դարավանդային բնակավայրը չկորցրեց իր տեսքը, որովհետև օգտագործվում էր նույն լանջը: Առաջ եկավ ճանապարհների եզրերին ու բակերի ստորին հատվածներում ամուր

[7] «Դարզ անել» նշանակում է պատի մեջ շարված քարերի միջև եղած ճեղքերը շաղախով ծածկել, այսինքն՝ սվաղել միայն ճեղքերը:

պատվարներ կառուցելու անհրաժեշտություն։ Դրանցով բնակավայրը պահպանում էր իր դարավանդային համայնապատկերը (նկ. 2) [5, ց. 1, գ. 2, թ. 7]։

Լանդշաֆտի օգտագործումը երկրագործական նպատակներով

Ինչպես հայոց ավանդական տնտեսության մեջ, Գանձակում ևս երկրագործության հիմնական ճյուղերն էին դաշտավարությունը և այգեգործությունը։ Մասամբ զբաղվել են նաև բանջարաբուծությամբ։ Ավանդաբար փորձ է արվել մշակելի դարձնել բոլոր հնարավոր հողակտորները։

Վարելահողեր են ծառայել սարահարթերը, ինչպես նաև լեռնալանջերը (1, էջ 1)։ Դրանք ընդլայնելու անհրաժեշտությունից ելնելով, յուրացվում էին նոր տարածքներ ավելի բարձրադիր գոտիներում։ Գանձակում վարելահողերի արդյունավետության բարձրացման նպատակով կիրառվում էր երկդաշտային համակարգը, որպեսզի հողը կարողանար հանգստանալ [11, էջ 100]։ Ըստ ԱՏՀ-ի տվյալների՝ շատ գյուղերի շրջակայքում հնարավոր եղավ արձանագրել լանջերի վրա գտնվող դարավանդային վարելահողեր։ Առանձին տեղամասերը բաղկացած են լանջի վրա հորիզոնական ձգվող երկայնական հարթ հողակտորներից, որոնք, նեղանալով, աստիճանաձև տարածվում են լանջն ի վեր։ Մշակվող ամեն հարթ տարածության ստորին հատվածում տնական մշակման արդյունքում ձևավորվել է հենաթումբ (նկ. 3)։

Հողը հերկելու համար հիմնականում օգտագործել են գութան, որին լծում էին 6-8 զույգ լծկան։ Հատուկ այս նպատակով ավանդաբար պահում էին գոմեշ, որն ավելի ուժեղ կենդանի էր, քան եզը, սակայն գութանին միայն գոմեշներ չէին լծում, քանի որ դրանց ուղղորդելը դժվար էր [10, էջ 82]։ Գութանի կողմից առաջին լուծը կոչվում էր «ըմբոլի», երկրորդը՝ «ըմբլաղաք», երրորդից մինչև նախավերջին լուծերը՝ «մեջտեղի», իսկ վերջինը, որը հանդիսանում էր առաջատարը՝ «ծիրքերի»։ Գութանը ղեկավարում էր մաճկալը, որ Ջագիրում կոչվում էր «քոթանչի» (գութանչի)։ Մաճկալի օգնականը կոչվել է «մըճկըլ-ախպեր»։ Ամեն լուծի վրա մի փոքր տղա էին նստեցնում՝ այն քշելու համար։ Սովորաբար հողի չափման միավոր է ծառայել օրավարը (մեկ օրվա ընթացքում կատարած վար) [2, գ. 1, թ. 13-14]։

Արորը օգտագործում էին պակաս կարևոր տարածքները և հիմնական հողերը երկրորդական անգամ մշակելիս։ Ջագիր գյուղում արորը կոչվում էր «չութ»։ Ամեն մարդ չէր կարողանում այն օգտագործել, այլ հատուկ մարդիկ կային, որոնց կոչում էին «չութչի»։ Դրա վարը շատ անորակ էր ստացվում ու դժվար էր աշխատանքի ընթացքում այն կառավարել։ Ուստի չութով վարած արտերում ցորեն հազվադեպ էին ցանում, ավելի հաճախ մշակում էին կորեկ ու եգիպտացորեն։ Սովորաբար այս գործիքին լծում էին մեկ զույգ լծկան [2, գ. 1, թ. 13]։

Հերկի ծանր աշխատանքները ձգտում էին կատարել ամռանն ու աշնանը, քանի որ ձմռան ընթացքում կենդանիները համեմատաբար վատ էին կերակրվում ու գարնանը չէին կարողանում ողջ ուժով աշխատել։ Աշնանը գութանով հերկած հողերը գարնանը՝ նախքան ցանք անելը, արորով վարում էին (երբեմն ցանքը անում էին մինչև արորով վարելը, որպեսզի վարի ընթացքում հացահատիկը խառնվեր հողին)։ Այդպես գարնան աշխատանքը հեշտ էր ստացվում [11, էջ 150]։

Ինչպես նշվեց, կարևոր տնտեսական զբաղմունք էր այգեգործությունը: Ավանդաբար այգիները գտնվել են ձորերում՝ հաճախ գետափերի մոտ [7, էջ 227: 4, էջեր 297-308]: Ձորում հնարավոր էր մոտակա գետից ջուր անցկացնել, որի համար անհրաժեշտ էր լանջերի վրայով առուներ սարքել: Դրանք երբեմն անցնում էին ուղղահայաց ժայռերի մոտով, ու այդ հատվածներում, տեղանքի անհարմարությունից կախված, գետնուղիներ էին փորում ջրի հոսքը ապահովելու նպատակով: Առվից ներքև կառուցում էին քարից ամուր հենապատ, որը համարվում է դարավանդման դրսևորում: Երբեմն դրանց ջուրը նախ օգտագործում էին ջրաղացներն աշխատացնելու համար, ապա դրանցից ներքև տարածվող այգիներին ջուրը բաց էր թողնվում ոռոգման նպատակով [11, էջ 148]: Գառնակեր գյուղը, օրինակ, ուներ երեք առու, իսկ Բարսումը՝ չորսը, որոնց շնորհիվ ոռոգվում էր շուրջ 350 հեկտար այգի [5, ց. 1, գ. 3, թ. 1-2]:

Զառիվայր լանդշաֆտի պայմաններում այգիներ հիմնելու համար կառուցվում էին դարավանդներ, որոնցով աչքի էր ընկնում հատկապես Շամքորի ձորը: Դրանց ստեղծման համար նախ հավաքում էին քարերը, ապա փորում էին լանջը, որի հետևանքով հողի շերտերից դարձյալ դուրս եկած ու հավաքված քարերով հենապատեր էին շարում: Հողը լցնում էին հենապատի ու լանջի միջև: Ըստ լանջի թեքության աստիճանի և տարածքի հարմարության՝ հենապատերը կարող էին ունանալ 1-1.5 մ բարձրություն ու 20-25 մ երկարություն: Հաճախ լանջերի հողը բավարար չէր լինում լիցքի համար, ու հող էին բերում նաև այլ վայրերից: Որոշ դեպքերում օգտագործում էին նաև գետափերի տիղմահողը, որը լցվում էր որպես վերին շերտ: Հողը տեղափոխում էին ձիու, ջորու կամ էլ ավանակի միջոցով՝ «ջվալներով»: Պարարտացման համար օգտագործում էին գոմաղբ [5, ց. 1, գ. 3, թ. 1-2]: Դարավանդային այգու ներսում գտնվող ամեն առանձին դարատափը տեղացիները կոչում էին «խյեվանդ» [5, ց. 1, գ. 3, թ. 3-4]: Ն. Ղազարյանը պատկերավոր ձևով այսպես է բնորոշում Բարսումի դարավանդային այգիները. «Երբ հեռվից նայում ես այս այգիներին, զգում ես թե նրանց վրա քանի սերնդի և ինչպիսի ծանր աշխատանք է թափված: Ձորից նայելով սարալանջին՝ մինչև հորիզոնը տեսնում ես միայն քարապատ սանդուղքներ և գեղեցիկ այգիներ» [5, ց. 1, գ. 3, թ. 2]:

Հետաքրքրական է, որ խիստ զառիվայր ու քարքարոտ լանջերը, որտեղ ընդհանրապես հնարավոր չէր դարավանդներ կառուցել, նույնպես օգտագործվել են այգեգործական նպատակներով: Այդպիսի տարածքներում տնկում էին պտղատու և ոչ պտղատու տարբեր ծառատեսակներ՝ իրար միջև բավական հեռավորություն թողնելով: Նման այգիները կոչվել են «քարինք» [5, ց. 1, գ. 3, թ. 4]:

Բանջարանոցը Գանձակի հայերի ավանդական տնտեսության մեջ չնչին դեր ուներ: Հիմնականում մշակում էին լոբի, որի անվանումով տվյալ հողակտորը կոչում էին «լոբուտ»: Դրանք գտնվում էին կա՛մ այգիների մի հատվածում, կա՛մ էլ առանձին գետափնյա տարածքներում [12, էջ 3]:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ. Քարտեզագրման շնորհիվ ակնհայտ են դառնում հայկական գյուղերի տարածման օրինաչափությունները: Դրանք գերազանցապես նախալեռնային գոտում են եղել: Եզրակացնում ենք, որ այս օրինաչափության հիմնական պատճառը հայերի ու ասպատակող խմբերի (հիմնականում թյուրքական) միջև եղած հակա-

սություններն էին։ Ենթադրաբար, ժամանակի ընթացքում հայերը թողել են հարթավայրերում գտնվող իրենց տարածքները և տեղափոխվել նախալեռնային գոտիներ, որտեղ միջավայրը ավելի անվտանգ էր, և հարձակումների ժամանակ հնարավոր էր պաշտպանվել թիկունքում գտնվող ավելի դժվարամատչելի վայրերում։ Տարածքի նման ընտրությունը խոսում է նաև Գանձակի հայերի շրջանում տնտեսվարման ու կենցաղավարության ընդհանրության մասին։ Թերևս օտար էթնիկ խմբերից մեկուսի ապրելու ձգտմանը զուգահեռ՝ տարածքի ընտրության օրինաչափություններն արտահայտում են նաև սեփական հայրենիքում ապրելու մեծ ցանկությունը։ Գտնում ենք, որ տարածքի օգտագործման ներկայացված ժողովրդական տարատեսակ եղանակները զարգացել են հենց այս փաստից ելնելով։ Ընտրություն կատարելու այս ձևը առանցքային հոգեբանական հատկանիշ է և հաստատում է կոլեկտիվ կենսակերպի կարևորությունը։

ՀԱՎԵԼՎԱԾ



Քարտեզ 1. Հայկական գյուղերի տեղագրությունը Գանձակի շրջանում
(քարտեզագիր՝ Ռ. Գաբրիելյան, աղբյուրը՝ QGIS)։

Նկ. 1. Գառնակերի շենը (1980 թ.)
(լուսանկարը՝ Ս. Կարապետյանի, աղբյուրը՝ ՀՃՈՒ հիմնադրամի կայք artsakhmonuments.org)։



Նկ. 2. Գետաշենի տների կառուցապատումը (1980 թ.) (լուսանկարը՝ Ս. Կարապետյանի, աղբյուրը՝ ՀՃՈՒ հիմնադրամի կայք artsakhmonuments.org)։

Նկ. 3. Դարավանդային վարելահողեր Փիփ գյուղից հարավ-արևմուտք (աղբյուրը՝ QGIS)։

Գ ր ա կ ա ն ու թ յ ու ն

1. **Արծրունի Գ.** «*Ճանապարհորդութիւն դէպի Ելիսաւետպոլի նահանգը*»: «Մշակ»: Թիֆլիս: 1883: № 129:
2. **Բեգյան Մ.** «*Լեռնային Ջագիր գյուղի պատմությունը 1795-1975 թթ.*»: Երևան: ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվ: 1988:
3. **Գասպարեան Յ.** «*Չարդախտն եւ նրա պատմութիւնը*»//«Նոր-Դար»: Թիֆլիս:1889: № 197:
4. **Լալայան Ե.** *Երկեր*: հ. 2: Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատ.: 1988: 505 էջ:
5. **Ղազարյան Ն.** *Գանձակի գավառի Հայկական գյուղերի ազգագրական նյութեր*: Երևան: ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվ: 1982:
6. **Մ. Ե.** «*Բարտում*»// «Նոր-Դար»: Թիֆլիս: 1893: № 47:
7. **Քաջբերունի.** «*Բաղա գիւղի աւերումը*» // «Արարատ»: Էջմիածին: 1910: № 3: 226-233 էջեր:
8. **Pondelikova I.** "*Cultural Landscape as the Identity of Phenomenon»*" // European Journal of Transformation Studies. Tbilisi. Ivane Javakhishvili Tbilisi State University. 2023, V. 11. № 2. 72-105 pp..
9. **Taylor K., Lennon J.** "*Cultural landscapes: a bridge between culture and nature*" // International Journal of Heritage Studies. London. Taylor & Francis. 2011. V. 17, 537-554 pp..
10. **Абелов А.** "*Экономический быт государственных крестьян Елисаветпольского уезда Елисаветпольской губернии*"// Материалы для изучения экономического быта государственных крестьян Закавказского края. т. 7. ч. 1. Тифлис. 1887. 1-140 сс..
11. **Серебряков И.** "*Сельское хозяйство в Елизаветпольском уезде*"//Записки Кавказского общества сельского хозяйства. Тифлис. 1861. № 1-2. 89-190 сс..
12. **Серебряков И.** "*Сельское хозяйство в Елизаветпольском уезде*" // Записки Кавказского общества сельского хозяйства. Тифлис. 1862. № 1-2. 1-61 сс..

References

1. **Artsruni G.** "Travel to the Elisavetpol Province" [*Twanaparhordut'iwn de'pi Elisavetpo'li nahangy'*], "Mshak", Tiflis, 1883, № 129. (in Armenian)
2. **Begyan M.** "The History of the Nagorno-Jagir Village 1795-1975" [*Ler'nayin Jagir gyughi patmut'yuny' 1795-1975 t't'*], Yerevan, Archives of the Institute of Archaeology and Ethnography, 1988. (in Armenian)
3. **Gasparian Y**. "Chardakhlu and his History" [*Chardaxlun ew nra patmut'iuy'*], Nor-Dar, Tiflis, 1889, № 197. (in Armenian)
4. **Lalayan E.** "Works" [*Erker*], vol. 2, Yerevan, pub. AS of the ASSR, 1988, 505 p. (in Armenian)
5. **Ghazaryan N.** "Ethnographic Materials of the Armenian Villages of the Gandzak province" [*Gand'aki gavar'i Haykakan gyugheri azgagrakan nyut'er*], Yerevan. Archives of the Institute of Archaeology and Ethnography, 1982. (in Armenian)
6. **M. E.** "Barsum" [*Barsum*], "Nor-Dar", Tiflis, 1893, № 47. (in Armenian)
7. **Kajberouni**. "The Destruction of the Bada Village" [*Bada giwghi awerumy'*] // "Ararat", Echmiadzin, 1910, № 3, 226-233pp.. (in Armenian)
8. **Pondelikova I.** "*Cultural Landscape as the Identity of Phenomenon"* // European Journal of Transformation Studies, Tbilisi, Ivane Javakhishvili Tbilisi State University, 2023, V. 11, № 2, 72-105pp..
9. **Taylor K., Lennon J.** "*Cultural Landscapes: a Bridge Between Culture and Nature?*"// International Journal of Heritage Studies, London, Taylor & Francis, 2011, V. 17, 537-554pp..
10. **Abelov A.** "Economic Life of State Peasants of the Elisavetpol District of the Elisavetpol Province" [*Jekonamicheskij byt gosudarstvennyh krest'jan Elisavetpol'skogo uezda Elisavetpol'skoj gubernii*] // Materials for the study of the economic life of state peasants of the Transcaucasian region, vol. 7, part 1, Tiflis, 1887, 1-140pp.. (in Russian)
11. **Serebryakov I.** "Agriculture in the Elizavetpol District" [*Sel'skoe hozjajstvo v Elizavetpol'skom uezde*]//Notes of the Caucasian Society of Agriculture,Tiflisi,1861,№1-2, 89-190pp. (in Russian)
12. **Serebryakov I.** "Agriculture in the Elizavetpol District" [*Sel'skoe hozjajstvo v Elizavetpol'skom uezde*]// Notes of the Caucasian Society of Agriculture, Tiflis, 1862, № 1-2, 1-61pp.. (in Russian)

Ընդունվել է / Received on: **17. 03. 2025**
Գրախոսվել է / Reviewed on:**16. 04. 2025**
Հանձնվել է տպ. / Accepted for Pub: **23. 05. 2025**

Տեղեկություններ հեղինակի մասին

Ռաֆիկ Գոռի ԳԱԲՐԻԵԼՅԱՆ՝ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրության բաժնի կրտսեր գիտաշխատող, Երևան, ՀՀ,
էլ. հասցե՝ rafik.gabrielyan.iae@gmail.com // ORCID:0009-0005-5965-2614

Rafik Gor GABRIELYAN: junior Researcher at the Ethnography Department of the Institute of Archaeology and Ethnography of NAS, Yerevan, RA.
e-mail: rafik.gabrielyan.iae@gmail.com // ORCID:0009-0005-5965-2614